

ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Սամվել Թարվերդյանը մասնակցել է Եղեգնաձորում Իտալացի լուսանկարչի ստեղծագործությունների ցուցահանդեսի բացմանը

Մայիսի 7-ին Հայաստանի Ազգային պատկերասրահի Եղեգնաձորի մասնաճյուղում բացվեց իտալացի լուսանկարիչ Էուջենիո Մոլինարիի լուսանկարների ցուցահանդեսը:

Բացման խոսքով հանդես եկավ մասնաճյուղի վարիչ Քնարիկ Բաբախանյանը: Ողջույնի խոսք ասացին Ազգային պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Սամվել Թարվերդյանը, Եղեգնաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցու հովիվ Տեր Վազգեն քահանա Հովհաննիսյանը և այլք: Ցուցահանդեսի բացմանը մասնակցում էին Եղեգնաձորի արվեստասեր հասարակայնության ներկայացուցիչներ:

<<Ուղևորություն դեպի Իթալե>> խորագիրը կրող ցուցահանդեսը կգործի շուրջ երկու ամիս: Հասցեն՝ Վայոց ձորի մարզ, քաղաք Եղեգնաձոր, Մոմիկի 1: